ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՌՈԶԱ ՆԵՄԻՇԱԼՅԱՆ

Ժամանակակից տեղեկատվական հասարակություններում ինքնության հիմնախնդիրն ունի առանձնահատուկ տեսական և գործնական հնչեղություն, ինչը պայմանավորված է հաղորդակցության միջոցների, հետևաբար նաև մարդու շփման միջավայրի արմատական փոփոխությամբ: Թեև տեղեկատվական հասարակությունը հետարդիականության շրջանի մարդու սոցիոմշակութային ինքնության ձևավորման միջավայր է, ուր զուգահեռաբար ստեղծվում են ավանդական ինքնությունից տարբերվող բազմաթիվ նոր հնարավորություններ, սակայն դեռևս իրենց արդիականությունը չեն կորցրել նաև ավանդական ինքնության դրսևորումները: Պետք է նկատել, սակայն, որ հաղորդակցության ժամանակակից միջոցները մարդուն հնարավորություն են տալիս հաղթահարելու ավանդական շփման և ինքնանույնականացման սահմանափակումները, ինչը վկայում է, որ մարդն ինքնության կրավորական կրողից վերածվում է փնտրողի և ընտրողի: Լինելով ամբողջական համակարգ՝ ինքնությունը հանդես է գալիս որպես ինքնանույնականացումների այնպիսի ամբողջություն, որը բաղկացած է պատմական, մշակութային, տարածքային, բարոյական, քաղաքական, ազգային և այլ գործոններից: Տեղեկատվական հասարակության պայմաններում դրանք տեղեկատվական հոսքերի ազդեցության տակ փոխվում են, իմաստափոխվում և վերաարժևորվում, ինչը հանգեցնում է ինքնությունը վերագտնելու անհրաժեշտության: Առավել ևս, որ ինքնությունը ոչ այնքան գենետիկ-կենսաբանական, որքան մշակութային երևույթ է, այն էլ՝ էթնիկ-մշակութային կամ ազգային-մշակութային: Վերջինս, լինելով պատմական երկարատև ընթացքի արդյունք, առավել քան արդիական է ազգային պետությունների ձևավորման, ազգային շահերի ձևակերպման և ազգային մշակույթների զարթոնքի ժամանակակից փուլում:

Ժամանակակից հասարակություններում տեղեկատվությունը մարդու կենսագործունեության հիմնական գործոններից մեկն է և մեծապես ազդում է հասարակության զարգացման վրա: Մասնավորապես, ժամանակակից աշխարհում տեղեկությունը ընտրություն կամ վճիռ կայացնելիս վճռորոշ նշանակություն է ձեռք բերել, քանի որ ցանկացած կենսագործունեություն իրականացվում է տեղեկատվական համակարգերի շրջանակներում և ենթարկվում է դրանց տրամաբա-

նությանը, ինչն էլ հիմնավորում է ժամանակակից հասարակություններում տեղեկատվության բացառիկ կարևորությունը: Պետք է նկատել, սակայն, որ տեղեկատվությունը անհրաժեշտաբար չի ենթադրում հասարակության ինտելեկտուալացում, այլ հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ սոցիալապես նշանակալի տեղեկությունն է դառնում այս կամ այն որոշումն ընդունելու չափանիշը: Դրանով հանդերձ, տեղեկատվական համակարգերը իրականացնում են ընտրության ժամանակ անորոշության չափը նվազեցնող գործառույթ, ինչը կոնկրետ իրավիճակներում կտրուկ բարձրացնում է տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի սոցիալական նշանակությունը:

Տեղեկատվական հասարակության պայմաններում ինքնությունը դառնում է ոչ թե տրվածության, այլ ընտրության հարց: Մարդու էական հատկություններից մեկը, որը նրան առանձնացնում է մյուս կենդանի արարածներից, այն է, որ նա ունի սեփական նույնականությունը (լատիներեն՝ identificus – նույնական, միատեսակ) ձեռք բերելու ընդունակություն: Ինքնության՝ որպես տրվածության ընկալումը բնորոշ է այսպես կոչված ավանդական ինքնությանը, որը կառուցվում է սերնդե սերունդ փոխանցվող վարքի և մտածողության կայացած ու կարծրացած նորմերի և դրանցով կառուցվող սոցիալական կապերի ու հարաբերությունների ողջ համակարգով: Դա, ըստ էության, քննության չառնվող և, որպես կանոն, ոչ նպատակային կառուցվող ինքնություն է, որը հաճախ ընդունվում է այլընտրանքների բացակայության կամ ոչ անհրաժեշտ լինելու պատճառով:

Մինչդեռ ինքնությունը՝ որպես ընտրության արդյունք, բնորոշ է առավելապես տեղեկատվական հասարակությանը, քանի որ վերջինս բնութագրվում է տեղեկատվության անսպառ ծավալով և ակտիվ հոսքերով, որոնք հնարավորություն են տալիս վերաիմաստավորելու և վերարժևորելու ավանդական ինքնության առանցքը կազմող մտածողության և վարքի ավանդական նորմերը: Նույնպիսի՝ ընտրության արդյունք հանդիսացող ինքնություն ձեռք բերելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև սոցիալական կարգավիճակի փոփոխության կամ փնտրտուքի մեջ հայտնված մարդու կամ խմբի պարագայում (դինամիկ մարգինալություն)[1], ինչը, փաստորեն, փոխակերպվող հասարակության պայմաններում միանգամայն տարածված երևույթ է:

Մարդու ինքնանույնականացումը և սեփական անձը որպես «ուրիշ» ներկայացնելը մարդկանց հաղորդակցության և համատեղ գործունեության կարևոր պայմաններից մեկն է, իսկ հումանիտար գիտություններում մարդու ինքնության խնդիրը սկսեց մանրակրկիտ ուսումնասիրվել միայն 20-րդ դարի կեսերին, երբ ակնհայտ դարձավ ազ-

[1] Տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Սոցիոմշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ // Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ: Հոդվածների ժողովածու, Եր., 2007, պրակ 3, էջ 3-13:

գային-ավանդական, կրոնական և այլ նույնականությունների էական նշանակությունը:

Ներկայումս ինքնության խնդիրը դարձել է սոցիոլոգների, հոգեբանների, փիլիսոփաների, մշակութաբանների ուշադրության առարկա[2]: Սոցիոլոգիայում նույնականացում ասելով հասկանում են անհատի հարաբերակցումն այն խմբերի հետ, որոնց նա ընկալում է որպես «իրենը», և որոնց հետ հարաբերության մեջ նա առավելագույնս ընդունակ է զգալ և ասել խմբային «մենքը» (գենդեր, ընտանիք, կրոն, էթնոս, մասնագիտություն և այլն)[3]: Փիլիսոփայության մեջ օգտագործվում է «անհատական նույնականություն» հասկացությունը, որը նշանակում է՝

1. «Ես»-ի (գիտակցության, բանականության) ինքնությունը, անհատի ինքնագիտակցումը տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում,

2. անձի էության մշտական կամ շարունակական միասնության պահպանումը գործունեության կամ վարքի փոփոխության ընթացքում:

Սա ենթադրում է.

ա) հիշողության առկայություն,

բ) ինքն իրեն նույնականացնելու ընդունակություն,

գ) իր հետ տեղի ունեցածի կամ տեղի ունեցողի մասին գիտելիքը չկորցնելու ընդունակություն[4]:

Հոգեբանության մեջ նույնականությունը դիտվում է որպես «ինքնության, սեփական ճշմարտության, համարժեքության և անձի կողմից սեփական Ես-ին հաստատուն տիրապետելու զգացում՝ անկախ Ես-ի փոխակերպումներից և իրավիճակից: Հոգեբանության մեջ նույնականությունը հասկացվում է որպես անհատի կողմից այն խնդիրների լիարժեք լուծման ունակություն, որոնք ի հայտ են գալիս զարգացման յուրաքանչյուր փուլում»[5]:

Միևնույն ժամանակ գլոբալացման գործընթացում գտնվող հասարակություններին բնորոշ է ինքնության ճգնաժամը, որը դրսևորվում է տարբեր կերպ՝ կախված այն բանից, թե որ հարթության վրա է ընթանում ինքնության ձևավորումը, սկսած ավանդական-տրված և նորընտրովի նույնականացումներից, վերջացրած վիրտուալ իրականությունում բազմաթիվ ինքնանույնականացումների հնարավորություններով, որոնց կրողն արդեն ոչ այնքան ֆիզիկական մարդն է, որքան նրա վիրտուալ «երկվորյակը»: Բնականաբար, վերջինս «մաներելու» ավելի մեծ հնարավորություններ ունի, քան ֆիզիկական մարդը, որի համար սոցիոմշակութային միջավայրը արգելքների և այլ տիպի սահմանա-

---

[2] Տե՛ս **Эриксон Э.** Идентичность: юность и кризис. М., 1996, **Малахов В. С.** Неудобства с идентичностью // Вопросы философии. 1998, № 2, **Хёсле В.** Кризисы индивидуальной и коллективной идентичности // Вопросы философии. 1994, № 10:

[3] Տե՛ս «Социологическая энциклопедия» / Рук. научн. проекта Г. Ю. Семигин: В 2-х т., М., 2003, Т. 1:

[4] Տե՛ս «Современный философский словарь» / Под общ. ред. В. Е. Кемерова. М., 2004:

[5] «Словарь практического психолога». / Сост. С. Ю. Головин. Минск, Москва, 2001.

փակումների իրական համակարգ է, մինչդեռ վիրտուալ իրականությունն այս իմաստով շատ լիբերալ է: Այլ կերպ ասած՝ հարաբերությունների տեղակատվայնացում և վիրտուալացում ապրող հասարակություններում[6] ինքնության ճգնաժամի համար պարարտ հող են ի սկզբանե ակտուալ սոցիոմշակութային ֆիզիկական իրականությունը և այլընտրանքային նույնականացումների լայն ընտրություն ենթադրող տեղեկատվական-վիրտուալ համակարգերը, որոնցում ըստ ցանկության կամ պահանջի կարող է ակտուալ դառնալ որևէ կոնկրետ հարաբերություն: «Փաստորեն, նույնականությունը արտացոլում է այն իրողությունը, թե մարդն իրեն ինչպես է ընկալում, բնութագրում և վերապրում որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտ»[7]:

Վերլուծելով անհատական և կոլեկտիվ ինքնության ճգնաժամերը՝ Վ. Խյոսլեն ուշադրություն է դարձնում հարցի իրական (էմպիրիկ) և ձևական (տրամաբանական) կողմերին: Վերջինս յուրաքանչյուր օբյեկտի մտածելիության պայմանն է: Ըստ էության նկատի է առնվում այն տրամաբանական սկզբունքը, որ մտածվող օբյեկտը պետք է ինքն իրեն նույնական լինի՝ որպես նրա մտածելիության պայման (A=A): Իսկ իրական նույնականությունն օբյեկտի նույնությունն է իր հետ ժամանակի մեջ[8]: Ընդ որում՝ այս երկու նշանակություններն էլ, ըստ Հյոսլեի, փոխկապակցված են մարդու մեջ, որը մտածում է ինքն իր մասին և այդ կերպ իր մասին հասկացությունը ներառում է իր նույնականացման գործընթացի մեջ, ինչը պահանջում է իր մասին հասկացության հարաբերակցում իրական Ես-ի հետ: Եթե նույնականությունը ինքն իրեն ժամանակի մեջ պահպանելու ունակությունն է, ապա օրինաչափորեն հարցեր են ծագում այն մասին, թե մասնավորապես ինչը պետք է պահպանի, և ինչպես է տեղի ունենում ինքնության ձևավորման ողջ գործընթացը:

Տվյալ դեպքում ինքնանույնականություն ասելով հասկանում են մարդու կողմից իր՝ որպես ինքնուրույն, ամբողջական և բացառիկ անհատի մասին պատկերացումների ձևավորման գործընթացը: Նույնականացումը յուրահատուկ մարդկային ակտ է, որը ձևավորվում է մշակույթի և հասարակության ազդեցությամբ, այլ ոչ թե դետերմինավորված է բնությամբ[9]: Մարդուն, ի տարբերություն այլ կենդանի արարածների, բնորոշ է ինքնատարբերակումը, ինչը նախորդում է ինքնանույնականացմանը, որը ձևավորվում է մարդկանց գործունեության ընթացքում, երբ նրանք պետք է դառնան իրենք իրենց համար ճանաչելի, ինչը մյուսներից տարբերվելու պայմանն է: Նույնականությունը մար-

---

[6] Տե՛ս **Яралян К. Э.** Проблема идентичности в сетевом обществе // Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ: Հոդվածների ժողովածու, Եր., 2008, պրակ 5:

[7] **Է. Ա. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 7:

[8] Տե՛ս **Хёсле В.** Кризисы индивидуальной и коллективной идентичности // Вопросы философии. 1994, № 10, էջ 112:

[9] Տե՛ս **Шеманов А. Ю**. Самоидентификация человека и культура. М., 2007:

դու մեջ սկսում է ձևավորվել վաղ մանկության տարիներին՝ սեփական մարմնի իրական լինելու և սեփական կերպարի հատվածական վերապրումների և համադրման հիմքի վրա: Դա ամենից առաջ իր պատկերն է հայելու մեջ, որը երեխան սկսում է ճանաչել բավականին վաղ տարիքում, ընդ որում՝ տվյալ դեպքում տեղի ունի կրկնակի տարբերակում՝ տարբերակում իրականությունից, որի պատկերը վերարտադրվում է, և տարբերակում այն կերպարից, որը համադրման միջոցով ընկալվում է որպես իրականության վերարտադրություն, այսինքն՝ որպես կերպարից (ոչ իրականից) տարբերվող ինչ-որ մի բան: Պետք է նշել, որ մարդու մեջ առաջացող կերպարը սիմվոլ է, և այդ սիմվոլիզմը մարդուն բնորոշ ռեֆլեքսիայի արդյունք է:

Ի տարբերություն մարդու՝ կենդանիների ընկալումն ու վարքը ներառում է իրենց առանձնահատուկ լինելու ռեֆլեքսիան այն իմաստով, որ իրենք միայն անորոշ իրավիճակներին ուղղված ռեֆլեքսներ ունեն: Ընդ որում՝ կենդանու պատասխանը պայմանավորված է այդ անորոշության և դրանով իսկ՝ այդ ռեֆլեքսիայի հեռացմամբ[10]: Կենդանին խուսափում է անորոշությունից, և այդկերպ է նա հարաբերվում դրա հետ: Նա չի կատարում դրա սիմվոլիզացիա, այսինքն՝ ճանաչելիության ստեղծում, ուստի և կենդանին չի կարող ինքն իրեն տարբերել: Այս փաստը հաստատում են Ա. Վալոնի այն դիտարկումները, որոնք նվիրված են երեխայի և շիմպանզեի ձագի ռեակցիաների տարբերությանը այն ժամանակ, երբ նրանք իրենց արտացոլումն էին տեսնում հայելու մեջ: Զարգացման որոշակի փուլում և՛ երեխան, և՛ շիմպանզեն սկսում են արձագանքել հայելու մեջ իրենց կերպարին, մինչդեռ շիմպանզեի արձագանքը մարում է, երբ նա հասկանում է, որ գործ ունի կերպարի հետ, իսկ երեխայինը, ընդհակառակը՝ ուժեղանում է:

Այսպիսով, ինքնության ձևավորման անհրաժեշտ պայման է այն սոցիոմշակութային աշխարհը, որում նա ապրում է: Ընդ որում՝ ինքնանույնականացումը հնարավոր է դառնում այն դեպքում, երբ մարդ գիտակցում է ոչ միայն իր արտաքին տարբերությունը մյուսներից, այլ նաև տարբերությունը մշակութային-տեղեկատվական առումով: Սա տեղի է ունենում որոշակի սոցիոմշակութային հանրույթի արժեքների և նորմերի յուրացման ընթացքում, ինչն իր հերթին հնարավոր է միայն դրանք մեկ այլ նորմատիվ-արժեքային համակարգին հակադրելու հիման վրա: Հենց տեղեկատվական տարբերություններն են բերում «յուրային» և «օտար» խմբերի առանձնացման, ինչը նկատվում էր արդեն նախնադարում[11]: Այն ժամանակ մարդը հստակորեն նույնացնում էր ի-

---

[10] Տե՛ս **Шеманов А. Ю**. Проблема символичности живого тела и самоидентификация человека // Логос живого и герменевтика телесности. Постижение культуры. Ежегодник. Вып. 13–14, М., 2005:

[11] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Поршнев Б. Ф.** Социальная психология и история. М., 1979, **Назаретян А. П**. Историческая эволюция морали: прогресс или регресс? // Вопросы философии. 1992, № 3.

բեն «իր» որոշակի խմբի հետ և իրեն սահմանում էր այդ խմբին պատկանելու միջոցով: «Օտարները» նախնադարյան մարդու կողմից բացասական էին գնահատվում. համարվում էր, որ նրանցից պետք է կա՛մ խուսափել, կա՛մ ոչնչացնել նրանց: Ավանդական հասարակության պայմաններում որոշակի խմբին մարդու անփոփոխ պատկանելությունն էր «ոչ խնդրահարույց» նույնականացման պայմանը:

Ինչպես տեսնում ենք, ինքնությունը ձևավորվում է որոշակի սիմվոլիկ մշակութային միջավայրի պայմաններում, և դրա համար անհրաժեշտ է մարդու հարաբերակցումը որոշակի սոցիոմշակութային հանրույթի հետ և հակադրումը մեկ այլ հանրույթի: Բացի դրանից, մարդ պետք է հստակ պատկերացում ունենա ինքնին շրջակա իրականության մասին, որպեսզի գտնի իր տեղը նրանում: Հենց այդ պատճառով էլ ինքնության ճգնաժամն առաջանում է այն ժամանակ, երբ կործանվում է սովորական դարձած սոցիոմշակութային միջավայրը, որը մարդկանց կողմից ընկալվում էր որպես բնական:

Տեղեկատվական մշակույթը՝ որպես լուսավորականության պատմական գործընթացի արդի փուլ, շարունակում է իրականացնել մարդու ընկալումներն ու փորձը կարգավորելու, գիտելիքները համակարգելու, իրականությունը կառավարելի դարձնելու գործառույթը: Լուսավորականությունը՝ որպես իրականության օրինաչափությունները բացահայտելու գործընթաց, ի սկզբանե ուներ բռնապետական միտում: Շատ փիլիսոփաներ նշել են իմացության վերլուծական մեթոդի քայքայիչ բնույթը, ամբողջը մասերի տրոհելու՝ ռեդուկցիայի թերությունները, նաև այն հանգամանքը, որ ցանկացած ճշմարտության և իրականության օրինաչափությունների բացահայտում ի սկզբանե ենթադրում է, որ ցանկացած գործընթաց կանխատեսելի է: Բացահայտելով իրականության օրինաչափությունները՝ մարդը փորձում է իր իշխանությունը հաստատել. «Իշխանությունը և իմացությունը հոմանիշներ են»[12]: Մյուս կողմից, ճանաչելով իրերը և իրականությունը, հաստատելով իր իշխանությունը, մարդ օտարվում է դրանցից: Գիտության ու տեխնիկայի միջոցով մարդկության ստեղծած գործիքները՝ տեղեկատվական տեխնոլոգիաները, ի սկզբանե ծառայում էին հենց իշխանություն հաստատելու նպատակին՝ թե՛ բնության նկատմամբ, թե՛ հասարակության: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց համընդհանուր բնույթով ստեղծել են հսկայական ցանցային համակարգ, որն իր իշխանությունն է հաստատել մարդկության վրա: Ցանցը տեղեկատվական մշակույթն է, որը կառուցարկվում է մի կողմից պետության կառավարման ձևերից, տնտեսության և արտադրական հարաբերությունների կազմակերպման ձևերից, կրթական համակարգերից, հանգստի կազմակերպման եղանակներից, ապրելակերպից ու մտածողությունից, մյուս կողմից՝ նորագույն տեխնոլոգիաներից՝ հեռուստատեսութ-

[12] **Bacon**. Novum Organum. Ibid., Band XIV, p. 31.

յունից, ռադիոյից, համակարգչային տարբեր սարքավորումներից, համացանցից:

Տեղեկատվական հասարակությունը միևնույն ժամանակ պարունակում է իրարամերժ երկու գործընթաց՝ ավանդական պատկերացումների և ապրելակերպի փոփոխություն և զուգահեռաբար ակտուալացում: Վերջինս հանդես է գալիս որպես կյանքի կազմակերպման միակ ծանոթ՝ սոցիոմշակութային ավանդական մոդելից կառչած մնալու փորձ, որին մարդիկ դիմում են այլընտրանքներ չունենալու, իսկ ունենալու դեպքում էլ՝ այլընտրանքների չփորձված, հետևաբար՝ անհայտ լինելու պատճառով: Այս իրավիճակը հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր մակարդակներում որոշակի լարվածություն և կոնֆլիկտայնություն է առաջացնում, քանի որ ուղեկցվում է արժեքների վերաարժևորմամբ և մեծ ծավալի տեղեկատվություն յուրացնելու, կանոնակարգելու անհրաժեշտությամբ: Այս պարագայում ինքնությունը մնում է իմաստաստեղծ գլխավոր, իսկ հաճախ նաև միակ երևույթը[13]: Պատահական չէ, որ փոխակերպվող հասարակությունում հակասությունների իմաստավորման և լուծման հիմնական միջոց է դառնում հենց ինքնությունը:

Ազատելով մարդկանց բնության իշխանությունից՝ տեղեկատվական ցանցը ազատում է մարդկանց նաև մտածելու անհրաժեշտությունից՝ դրանով իսկ ամրապնդելով իր իշխանությունը: «Լուսավորականությունն ավելի ամբողջատիրական է, քան որևէ այլ համակարգ»[14], - նշում էր Բեկոնը: Մեր ստեղծած աշխարհի գիտական պատկերը իշխանություն է հաստատել մեր իսկ ինքնության վրա: Լուսավորականության նորագույն միջոցներ հանդիսացող տեղեկատվական համակարգերը վերջին հարվածները հասցրին մարդկային բանականությանը և ինքնությանը՝ ծնելով նույնականության ճգնաժամ, որը որպես ժամանակակից հասարակության զանգվածային երևույթ, Զ. Բաումանի կարծիքով, «մոդեռն»-ի նախագծի արդյունքն է, երբ արդյունաբերական հեղափոխությունը աշխարհագրական մեծ բացահայտումներից հետո ավերեց ավանդական հասարակական կարգը և դրեց մարդու ինքնորոշման հարցը[15]: Այդ ճգնաժամը չէր դրսևորվում այնքան ժամանակ, քանի դեռ հարաբերականորեն կայուն էին սոցիալական շերտերը, որոնց հետ մարդը ստիպված էր նույնականանալ: Իսկ երբ սոցիալական կառուցվածքի փոփոխությունների տեմպն ակնհայտ դարձրեց նրա դինամիկան մեկ սերնդի շրջանակներում, նույնականությունը հանդես եկավ որպես ինքնատարբերակման խնդիր: Ավելին, նրա համոզմամբ, նոր ժամանակներում մարդու ինքնությունը տրվածությու-

---

[13] Տե՛ս **Кастельс М**. Информационная эпоха: экономика, общество и культура. М., 2000, էջ 492:

[14] **Bacon**. Novum Organum. Ibid., Band XIV, p. 52.

[15] Տե՛ս **Бауман З.** Индивидуализированное общество. М., 2002, էջ 176-192:

նից վերածվեց խնդրի, որը, պարզվեց, հարկադրաբար դրվել է հասարակության յուրաքանչյուր անդամի առջև՝ միաժամանակ ենթադրելով պատասխանատվություն այդ խնդրի լուծման համար: Նախորդ դարաշրջանի՝ մարդու սոցիալական դերի որոշակիությունը նոր ժամանակներում վերածվեց ինքնորոշման յուրօրինակ հարկադրանքի[16]: Նոր ժամանակները բացահայտեցին, որ իրերի բնությունը սահմանվում է դրա՝ այս կամ այն դառնալու հնարավորությամբ, պարզվեց, որ չկա մեկընդմիշտ տրվածություն: Աշխարհը դարձավ այնպիսի իրականություն, որի տրվածության համար մարդը պետք է պատասխանատվություն ստանձնի:

Ինքնության հարցն է՛լ ավելի սուր դրվեց արդի հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակության պայմաններում: Ինչպես վերը ասվեց, ինքնանույնականացման համար մարդուն անհրաժեշտ է հստակ պատկերացումներ ունենալ շրջապատող միջավայրի մասին և սահմանել այն սոցիալական խումբը կամ խմբերը, որոնք նա կարող է որակել որպես «իրենը»: Մինչդեռ ժամանակակից հասարակության պայմաններում դա անելը բավականին դժվար է: Ամենից առաջ՝ ներկայումս մարդուն հայտնի բոլոր սահմանները սկսել են գործնականում լղոզվել, ընդ որում՝ դա տեղի է ունենում ոչ թե տեղեկատվության սակավության, այլ ընդհակառակը՝ ավելցուկի պատճառով: Մենք ուսումնասիրել ենք նյութի կազմավորումը և տիեզերքի կառուցվածքը, կարող ենք հետևել հեռավոր աստղերին և ներխուժել երկրի խորքերը, մինչդեռ որքան խորն են մեր գիտելիքները, այդքան մշուշոտ է մեզ շրջապատող իրականության պատկերը, այդքան դժվար է սահմանել, թե ինչ է մեզ շրջապատող աշխարհը, իսկ դա նշանակում է, որ այդքան դժվար է գտնել մեր տեղը կյանքում:

Էապես փոխակերպվում են նաև իրականության՝ առաջին հայացքից անփոփոխ այնպիսի ատրիբուտները, ինչպիսիք են տարածությունը և ժամանակը: Բարձր տեխնոլոգիաների զարգացման արդյունքում, ըստ Մանուել Կաստելսի, ձևավորվում են «հոսքերի տարածություն» և «արտաժամանակյա ժամանակ»[17]: Ժամանակակից հասարակությունը հետզհետե ձեռք է բերում ցանցային բնույթ, և այդ պայմաններում ավելի քիչ նշանակություն է ունենում մարդու գտնվելու անմիջական վայրը. չէ՞ որ նա կարող է շփվել և նույնիսկ աշխատել՝ գործնականում գտնվելով աշխարհի ցանկացած կետում: Ֆիզիկապես բաժանված լինելով՝ մարդիկ կարող են գործել համատեղ: 1980-ական թվականներից սկսած՝ ավելի ու ավելի շատ մարդիկ են գործունեություն ծավալում վիրտուալ տարածությունում, որի տարրերը, Պ. Վիրիլիոյի արտահայտությամբ, «զրկված են տարածական չափումներից, բայց դրված են

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 180-182:

[17] **Кастельс М**. Информационная эпоха: экономика, общество и культура. М., 2000, с. 354-434.

տարածման միասնական վայրկենականության մեջ: Այդ պահից սկսած՝ մարդկանց հնարավոր չէ բաժանել ֆիզիկական խոչընդոտներով կամ ժամանակային բաժանումներով: Այստեղի և այնտեղի միջև բաժանումը կորցնում է իր իմաստը, քանի որ դրանք միջնորդավորված են համակարգչային տերմինալներով և տեսաէկրաններով»[18]: Գերարագ փոխադրամիջոցները նույնպես լուծում են տարածական սահմանափակումների խնդիրը: Այսպիսով տեղի է ունենում տարածության սեղմում, դրա կազմակերպումն այժմ կախված է տեխնիկայից:

Տարածության ընկալումն անքակտելիորեն կապված է ժամանակի ընկալման հետ, որը նույնպես փոխում է իր տեսքը, ընդ որում՝ այդ փոփոխությունները երկակի են: Մի կողմից՝ տեղեկության ակնթարթային տարածումը ողջ երկրագնդով մեկ, հեռահաղորդակցության միջոցներով դեպքի վայրից իրադարձության ուղիղ հեռարձակումները սոցիալական և մշակութային իրողություններին հաղորդում են ժամանակային աննախադեպ ակնթարթայնություն: Համակարգչային ցանցերի միջոցով հաղորդակցությունները թույլ են տալիս երկխոսություն վարելու իրական ժամանակում՝ միավորելով մարդկանց ինտերակտիվ ակնթարթային հեռահաղորդակցությունում (չատ): Մյուս կողմից՝ տեղի է ունենում ժամանակի խառնում, ընդ որում՝ տվյալ էֆեկտը բնորոշ է կապի միևնույն միջոցի շրջանակներում և ձևավորվում է փոխգործակցության մասնակցի ընտրությամբ: Սրա հիմքի վրա Մ. Կաստելսն առաջ է քաշում մի գաղափար, համաձայն որի՝ «արտաժամանակյա ժամանակը՝ որպես … մեր հասարակության մեջ տիրապետող ժամանակավորություն, ծագում է, երբ տվյալ համատեքստի բնութագրիչները և հատկապես տեղեկատվական հարացույցը և ցանցային հասարակությունը ծնում են համակարգային փոխազդեցություններ իրադարձությունների հաջորդման կարգում, որոնք տեղի են ունենում այդ համատեքստում: Այդ փոխազդեցությունը կարող է ընդունել իրադարձությունների միջև ժամանակահատվածների նեղացման ձև, որն ուղղված է իրադարձությունների հաջորդականության վայրկենականությանը կամ պատահական ընդհատումներին: Հաջորդականության վերացումը ստեղծում է չտարբերակված ժամանակ, որը հավասարազոր է հավերժությանը»[19]:

Ժամանակատարածային փոխակերպումները էական ազդեցություն են ունենում նաև ինքնանույնականացման գործընթացի վրա: Մարդն սկսում է էական դժվարություններ ունենալ որոշակի աշխարհագրական տարածության հետ իր կապի սահմանման գործում, ինչը մի շարք հետազոտողների թույլ է տալիս խոսելու «նոր թափառականության»[20] և «թափառական նույնականության»[21] մասին: Կոնկրետ տե-

---

[18] **Verilio P**. The Lost Dimension. New-York, 1991, p. 97.

[19] **Кастельс М**., նշվ. աշխ., էջ 3:

[20] **Тоффлер Э**. Футурошок. СПб., 1997, с. 56.

[21] **Rosseel E**. Nomadisation: social, psychological and cultural context for the XXI century? // Символы, образы и стереотипы: исторический и экзистенциальный опыт. Международные чтения по теории, истории и философии культуры. СПб., 2000, № 8.

ղանքի հետ կապի խզումը Զ. Բաումանը պատկերավոր է բնութագրում մի տարեց կնոջ կյանքի օրինակով. մի կին, ով միջազգային առևտրային կազմակերպության անդամ էր, գիտեր հինգ լեզու և ուներ երեք բնակարան տարբեր քաղաքներում: «Նա մշտապես տեղափոխվում է, գնում է տեղից տեղ, այստեղ, այնտեղ և վերադառնում է: Նա դա անում է միայնակ, ոչ թե ինչ-որ խմբի հետ: Մշակույթը, որին նա պատկանում է, որոշակի տեղի մշակույթ չէ, դա ժամանակի մշակույթ է: Դա բացարձակ ներկայի մշակույթ է»[22], - գրում է նա: Տվյալ կինը, ինչպես բազում մարդիկ այս աշխարհում, օգտվում է տարածության վիրտուալությունից: Տարածության վիրտուալությունը օգնում է նրան ազատվելու ցանկացած սահմանափակումից, որը կապված է իրական տան հետ, օգնում է նրան ապանյութականացնել տարածությունը՝ չենթարկվելով անհարմարավետության և անտուն գոյության տագնապներին: Ինչպես նշում է Բաումանը, մշակույթի վիրտուալացման պայմաններում, որը տեղի է ունենում բարձր տեխնոլոգիաների ազդեցությամբ, շատ մարդիկ վերածվում են ճամփորդների՝ տան քաղցր և միաժամանակ դառը կարոտը վեր դասելով տնային հարմարություններից, քանի որ նրանք այդպես են ուզում կամ որովհետև դա համարում են «հանգամանքների բերումով» ստացված՝ կյանքում իրենց վարքի առավել բանական ռազմավարություն կամ նրա համար, որ նոր զգացողությունների որոնումներում գայթակղվել են իրական կամ մտացածին հաճույքներով:[23] Այդպիսի հարկադրված «թափառումը աշխարհով մեկ» ինչ-որ չափով հակասում է մարդու բնությանը, հակաբնական է. այն մարդուն զրկում է սոցիալական ամուր կապերից, կայուն նույնականությունից, մինչդեռ տարածության վիրտուալացման պայմաններում մարդիկ հարկադրված են դառնալ «ճամփորդներ», որպեսզի իրացվեն որպես մասնագետներ. չէ՞ որ ժամանակակից աշխարհը «ձևվել է ճամփորդի նշագրումներով»:

«Հոսքերի տարածության» և «արտաժամանակյա ժամանակի» պայմաններում մարդը չափազանց դժվար է սահմանում, թե սոցիալական որ խմբերն են իր համար «յուրային»: Անհատը մասնակիորեն դադարում է իրեն հարաբերակցել իրական սոցիալական շրջապատի հետ և սեփական ինքնության նմուշներ է սկսում փնտրել մտացածին աշխարհում, որը ստեղծվում է զանգվածային տեղեկատվության միջոցների կողմից: Ընդ որում, «նմուշ» բառը տվյալ դեպքում պայմանական է. եթե տասնյակ տարիներ առաջ զանգվածային տեղեկատվական նմուշները հստակ էին, հասկանալի և մոտ, և մարդիկ հնարավորություն ունեին իրենք իրենց հարաբերակցել դերային մոդելների հետ, ապա այժմ դրանց քանակը աճել-հասել է անսահմանության: Դա պայմանավորված է ինտերակտիվ հեռուստատեսության և «զանգվածային

[22] **Бауман З**. Глобализация. Последствия для человека и общества. М., 2004, с. 127.
[23] Տե՛ս նույն տեղը, էջ 131:

անհատական հաղորդակցության» ձևավորմամբ[24]: Զանգվածային տեղեկատվության միջոցները, Է. Թոֆլերի պատկերավոր արտահայտությամբ, «մեզ կերակրում են նմուշների ոչ թե ամբողջական, այլ զարդարված չիփսերով»[25] Դրանք մարդուն չեն առաջարկում նույնականության մի քանի հասկանալի նմուշներ՝ ընտրելու համար, այլ առաջարկում են դա ստանալ փշրանքներից, ինչը շատերի համար դժվարություններ է հարուցում: Վիճակը բարդանում է նաև նրանով, որ մարդը ընտրում է «յուրայինների» անհիրական բարձր ստանդարտներ: Զանգվածային տեղեկատվության այդ նույն միջոցներն ամեն օր շարքային բնակչին ցուցադրում են «աստղերի», միլիոնատերերի, անվանի մարդկանց կյանքը և ստիպում են համեմատել դա իրենց վիճակի հետ, ընդ որում՝ բնականաբար, այդ համեմատությունն հոգուտ վերջիններիս չի լինում և դառնում է ինչպես հոգեբանական, այնպես էլ սոցիալական խնդիրների պատճառ:

Ժամանակակից պայմաններում անհատի ինքնությանն առնչվող խնդիրների հետ կապ ունեն նաև «վիրտուալ նույնականությունը» և «ցանցային նույնականությունը»: Ներկայումս հստակորեն ուրվագծվել է տարբեր «ցանցային հանրույթների» կամ «վիրտուալ հանրույթների» («օն-լայն հանրույթների») ձևավորման միտումը, որը բավականին դինամիկ զարգանում է[26]: Վիրտուալ հանրույթը երևակայական չէ, քանի որ նրա անդամները «ծանոթ» են միմյանց, պարբերաբար շփվում են, մինչդեռ այդ շփումը տեղի է ունենում վիրտուալ տարածությունում: Վիրտուալ հանրույթի էական բնութագրությունը սոցիալական համագործակցությունն է, որը բավականին յուրահատուկ է, քանի որ հանրույթ մտնելու և դրանից դուրս գալու պայմանները էապես տարբերվում են իրական հանրույթներ մտնելու և դուրս գալու պայմաններից: Դրա համար բավական է միայն լքել ցանցային հասարակությունը: Բացի դրանից, նույնիսկ «վտարման» դեպքում մարդը կարող է հեշտությամբ «վերադառնալ» այդ նույն հասարակություն՝ գրանցվելով այլ անունով:

Ցանցային հասարակության շրջանակներում մարդը ձեռք է բերում նույնականանալու լիարժեք «ազատություն». իր հայեցողությամբ նա կարող է փոխել իրականության մեջ փոփոխության չենթարկվող այնպիսի բնութագրականներ, ինչպիսիք են ռասայական և ազգային պատկանելությունը, սեռը և տարիքը: Մարդը կարող է ինքը «կառուցավորել» իրեն, կամայականորեն փոխել վիրտուալ անունը, վիրտուալ մարմինը, վիրտուալ կարգավիճակը, վիրտուալ սովորությունները, վիրտուալ արժանիքները և վիրտուալ արատները: Բայց այդպիսի «ա-

---

[24] Տե՛ս **Кастельс М**. Новые индивидуальные масс-медиа // Свободная мысль. 2006, № 5, էջ 65:

[25] **Тоффлер Э**. Третья волна. М., 2004, с. 614.

[26] Տե՛ս **Ринкявичюс Л., Буткявичене Э**. Концепция общности (gemeinschaft/community) и ее специфика в виртуальном пространстве // Социс. 2007, № 7:

զատության» հետ մեկտեղ՝ ակնհայտ են նաև կորուստները՝ իրական մարմնի և կարգավիճակի, սեփական «Ես-ի» լղոզում: Բացի դրանից, «վիրտուալ» ինքնանույնականացումը կարող է մեծ խնդիրների առաջ կանգնեցնել իրական կյանքում, քանի որ անձի իրական ինքնությունը դառնում է է՛լ ավելի լղոզված և թվացյալ, ինչն ակնհայտ ցույց է տալիս Մ. Լյուիսն իր «Ապագան արդեն սկսվել է» գրքում[27]: Նա նկարագրում է նույնականությունը ազատորեն փոխող մի քանի դեռահասների, ովքեր կարծես կրում են նոր անհատների դիմակներ: Նրանցից մեկը տասնհինգամյա Մարկուս Առնոլդն է, ով դպրոցական դասերից հետո իր ազատ ժամանակի մեծ մասն անցկացնում է համացանցում՝ իրավաբանական խորհուրդներ տալով մեծահասակներին, ինչն ինքը համարում էր միանգամայն նորմալ երևույթ: Եվ չնայած իր տարիքին՝ Մարկուս Առնոլդը կայքում ներկայանում էր որպես քսանհինգամյա իրավաբան-փորձագետ՝ իրավաբանության բնագավառում երկամյա աշխատանքային ստաժով: Բավականին արագ նա մտավ շուրջ 150 լավագույն մասնագետների առաջին տասնյակ, որոնցից ամենաերիտասարդը 31 տարեկան էր, իսկ հետո բարձրացավ երրորդ հորիզոնական: Ընդ որում՝ Մարկուսն իրավունքի վերաբերյալ ընդհանրապես ոչ մի գիրք չէր կարդացել, նրա գիտելիքների աղբյուրներն էին համակարգիչը և հեռուստացույցը, որտեղ ցուցադրվում էին իրավական անթիվ շոուներ: Մարկուս Առնոլդի վարքը շատ լուրջ անձնային կոնֆլիկտի հետևանք էր. իրական կյանքում նա ապաշնորհ դեռահաս էր, ով չուներ ընկերներ, առանձնակի կարողություններ և հաջողություններ, իսկ ցանցում նա դարձավ «իրավաբանական կարողությունների աղբյուր» և ձեռք բերեց նշանակալիություն, ինչը նրան չէր տրվում իրական կյանքում: Այս օրինակը շատ հատկանշական է: Մի կողմից այն ցույց է տալիս, որ ցանցային հասարակությունում իրենց նշանակությունը կորցնում են ավանդական կարգավիճակային դիրքերը, արհեստավարժության մասին պատկերացումները և սոցիալական նորմերը, մյուս կողմից բնութագրում են վիրտուալ հասարակությունում նույնականության փոփոխման հեշտությունը: Շփվելով համացանցում և տարբեր բնույթի գործունեությունների մեջ ներառվելով ցանցում՝ անհատը ձեռք է բերում իր ինքնությունը կառուցելու, այն կառավարելու և մանիպուլացնելու ավելի շատ հնարավորություններ:

Միևնույն ժամանակ վիրտուալ իրականությունը, որը տեղեկատվայնացման թերևս անխուսափելի հետևանքն է և տարածման հաջորդ փուլը, չի կարող հակասություններ չառաջացնել ֆիզիկական իրականության հետ: Բանն այն է, որ փոխակերպվող հասարակությունում փոխվում է հասարակական հարաբերությունների ողջ համակարգը, նույնիսկ պետության գործառույթները և մարդկանց սոցիալա-

[27] Տե՛ս **Льюис М**. Будущее уже началось. СПб., 2004:

կան դերերն ու շահերը: Թվում է, թե այդ հակասությունները կարող են լուծվել սոցիոմշակութային որևէ մոդել տվյալ հասարակությունում ներդնելով: «Բայց, ինչպես ցույց է տալիս խորհրդային երկրների փոխակերպումների փորձը, սոցիոմշակութային նույնականության ճգնաժամի հաղթահարման այս ուղին արդյունքներ է տալիս միայն այն երկրներում, որոնք ունեն համապատասխան պատմական փորձ, պայմաններ, էթնոմշակութային նախադրյալներ և այլն: Հակառակ դեպքում՝ նույնականության ընդօրինակված սոցիոմշակութային հարացույցները բացառապես կրում են ձևական բնույթ և չեն կատարում համակեցության ձևավորման ու նույնականության կազմավորման իրենց գործառույթները»[28]: Նման իրավիճակներում ինքնության ճգնաժամերը ոչ թե լուծվում են, այլ քողարկվում, օրինակ՝ «բեմականացված նույնականության»[29] և նույնականության «ատրիբուտային դրսևորման» տակ: Առաջինի դրսևորումներ են «ժամանակակից» պահվածքը, կենցաղը, խոսելաձևը և այլն, իսկ երկրորդը հանդես է գալիս, օրինակ, պետության դրոշի, օրհներգի, մայրենի լեզվի կամ այբուբենի «ֆետիշացման» ձևով: «Բեմականացված նույնականության» նման զանգվածային դրսևորումների պատճառներ են «համապատասխան կրթության, դաստիարակության, կենսափորձի պակասն ու նաև գավառամտությունը»[30], որոնք գալիս են այլ սոցիոմշակութային մոդելի բովանդակությունը՝ բարոյականությունը, նշանակությունը, իմաստն ու նպատակը չիմանալուց կամ թյուրըմբռնելուց: Դա բավականին հստակ երևում է, օրինակ, էլիտայի (վերնախավի) և սոցիալական այլ շերտերի մարդկանց համեմատելիս, երբ «շարքային» քաղաքացին կարող է ունենալ էլիտային բնորոշ ինտելեկտուալ հատկություններ, պատասխանատվության զգացում և այլն, միաժամանակ չունենալով վերնախավին բնորոշ արտաքին ատրիբուտներ, և հակառակը՝ «երբ մարդիկ կարող են ունենալ վերնախավին բնորոշ արտաքին հատկանիշներ, չունենալով, սակայն, համապատասխան ընդունակություններ և բարոյականություն»[31]: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ լինելով ընտանիքի, էթնոսի, պետության, մշակույթի, քաղաքակրթության և այլ ձևերով ինստիտուցիոնալացված երևույթ, ինքնությունն ամեն դեպքում մեծապես ենթարկվում է նաև անհատի ոչ միայն սոցիալական, այլև սուբյեկտիվ իրականությանը (տարիք, նպատակ, շահ և այլն):

Այսպիսով, տեղեկատվական հասարակության պայմաններում անհատական ինքնանույնականացումը էական փոփոխությունների է

---

[28] **Է. Ա. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 9:

[29] Տե՛ս **Ионин Л. Г.** Социология культуры: путь в новое тысячилетие. М., 2000, էջ 242: Մեջբերումն ըստ՝ **Է. Ա. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 9:

[30] **Է. Ա. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 9:

[31] Նույն տեղում:

ենթարկվում, ինչը հետազոտողների կողմից իր արտացոլումն է ստանում «բազմագործոնային նույնականություն»[32], «թափառական նույնականություն»[33], «կոնֆիգուրատիվ կամ մոդուլային «ես»»[34], «ենթատեքստային-անկայուն նույնականություն»[35] և այլ տերմիններում: Բարձր տեխնոլոգիաները մի կողմից մարդուն տրամադրում են շատ մեծ ու նշանակալի հնարավորություններ իր ներուժը կիրառելու համար, մյուս կողմից էապես դժվարացնում են նրա ինքնություն, հետևաբար նաև գոյության ներդաշնակություն ձեռք բերելու նրա հնարավորությունները[36]:

Բանալի բառեր – *ինքնանույնականացում, տեղեկատվական հասարակություն, վիրտուալ նույնականություն, թափառող նույնականություն*

РОЗА НЕМИШАЛЯН – ***Проблема идентификации в информационном обществе***. – В статье исследуется самоидентификация человека в условиях новейших технических достижений, в частности интернета. Самовыражение в социально-культурном и виртуальном пространстве кардинальным образом различно, потому что в первом случае человек исходит из реалий своего пола, возраста, национальности, религии, времени и т.д., в то время как самовыражение в виртуальном пространстве лишено всех этих ограничений и предоставляет большую свободу выбора. При этом свободный выбор критериев самоидентификации подразумевает и большую неопределённость идентичности, поскольку свобода в любом своём проявлении более неопределённа, чем конкретна.

Самоидентификация в современных условиях противоречива, поскольку, с одной стороны, виртуальное пространство и новейшие технические средства более доступны, с другой стороны, всё актуальнее становятся традиционные механизмы самоидентификации – культура, история, религия, трациции. Вследствие этого современного человека характеризует хаотичная, эклектичная идентичность, которая влияет и на социальную реальность.

Ключевые слова: *самоидентификация, информационное общество, виртупльная идентичность, социальная реальность*

ROZA NEMISHALYAN – ***The Problem of Identification in the Infomation Soceity***. – The main problem investigated in the article is the problem of self-identification of the person in modern conditions of the latest technological developments and, in particular, the Internet and virtual space. Researchers note that the self-expression in culture (socio-cultural space) and self-expression in the virtual space are fundamentally different, because in the first case, a person is forced to proceed from the

---

[32] Տե՛ս «Модернизация и глобализация: образы России в XXI веке» / Отв. ред. В. Г. Федотова. М., 2002, էջ 185:

[33] Տե՛ս **Rosseel E**. Nomadisation: social, psychological and cultural context for the XXI century? // Символы, образы и стереотипы: исторический и экзистенциальный опыт. Международные чтения по теории, истории и философии культуры. СПб., 2000, № 8:

[34] **Тоффлер Э**., նշվ. աշխ., էջ 614:

[35] Տե՛ս **Данилова Е. Н., Ядов В. А.** Нестабильная социальная идентичность как норма современных обществ // Социс. 2004, № 10:

[36] **Лысак И. В.** Особенности самоидентификации человека в условиях современного общества // Гуманитарные и социально-экономические науки. 2008. № 6, с. 37-42.

realities of his gender, age, nationality, religion, time, etc., while the self-expression in the virtual space is deprived of all these limitations and therefore provides, at first glance, much freedom of self-identification. At the same time, we are aware that a large freedom of choice criteria of self-identification does not imply greater specificity, but on the contrary – the identity of greater uncertainty, because freedom in any of its manifestations involves greater uncertainty than concreteness.

The article highlights the contradictory nature of the process of self-identification in the present conditions, because, on the one hand, the virtual space and the latest technological tools are becoming more widely available, and on the other hand, the increasing urgency acquires traditional mechanisms of human identity – culture, history, religion, traditions and so on. As a consequence, we have a modern man with an uncertain, chaotic, eclectic identity, which is also manifested in the social reality, making it more uncertain and aimless.

Key words: *self-identification, information society, virtual identification, social reality*